Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1485 - Ն որոշման

Չ Ա Փ Ա Ն Ի Շ Ն Ե Ր

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

1. Սույնով սահմանվում են պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ հաստատություն) վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները:

2. Հաստատության վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերը դասակարգվում են ըստ հետևյալ չափանիշների՝

1) վարչական կազմի համար.

NN ը/կ		Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից												Վարձա-տրության խումբը
	Պաշտոնի անվանումը	1 խումբ	2 խումբ	3 խումբ	4 խումբ	5 խումբ	6 խումբ	7 խումբ	8 խումբ	9 խումբ	10 խումբ	11 խումբ	12 խումբ	
1	գլխավոր հաշվապահ	0.5	0.5	0.5	0.75	0.75	1	1	1	1	1	1	1	3
2	տնտեսվար	0.25	0.5	0.5	0.5	0.75	0.75	1	1	1	1	1	1	2

3	գործավար	-	-	-	-	0.25	0.25	0.5	0.5	0.5	1	1	1	1
4	շեֆ խոհարար	-	-	-	-	-	-	-	-	-	1	1	1	3
5	խոհարար	1	1	1	1	1	1	2	2	2	2	2	2	2
6	խոհարարի օգնական	0.5	0.5	0.5	1	1	1	1	1	1	1	1	1	1
7	օժանդակ բանվոր	0.25	0.5	0.5	0.5	0.5	0.5	1	1	1	2	2	2	1
8	խոհանոցի լվացարար (շուրջօրյա հաճախում ունեցող մանկապարտեզում)	-	0.75	1	1	1.5	2	2.25	2.5	2.5	2.5	3	3	1
9	լվացարար (կահավորված լվացքատան առկայության դեպքում)	-	0.5	0.5	0.5	0.5	0.5	1	1	1	1	1	1	1
10	հավաքարար	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	1	1	1	1	1	1
11	հնոցապան	ինքնուրույն կենտրոնական ջեռուցում (ջրի, գազի, գոլորշու) ունեցող մանկապարտեզներում ջեռուցման սեզոնում սահմանվում է հնոցապանի հաստիք՝ յուրաքանչյուր հերթափոխի համար մեկ դրույքի հաշվով												1

12	փականագործ-էլեկտրամոնտյոր	կենտրոնացված ջերմամատակարարման (ՋԷԿ) դեպքում ջերմային կետ կամ էլևատոր ունեցող մանկապարտեզներում սահմանվում է փականագործ-էլեկտրամոնտյորի մեկ հաստիք, իսկ բոյլերի և պոմպի դեպքում, երբ պահանջվում է շուրջօրյա հերթապահություն, սահմանվում է փականագործ-էլեկտրամոնտյորի հաստիք, յուրաքանչյուր հերթափոխի համար մեկ միավորի հաշվով	1
13	փականագործ-էլեկտրամոնտյոր	սառնարանային սարքավորում, էլեկտրասալիկ և այլ էլեկտրական ջեռուցման սարքավորումների առկայության դեպքում 4 և ավելի խումբ ունեցող մանկապարտեզներում (եթե հաստիքներում չի նախատեսված փականագործ-էլեկտրամոնտյորի հաստիք) սահմանվում է 0,5 միավոր փականագործ-էլեկտրամոնտյորի հաստիք	1
14	դռնապան	ինքնուրույն շենք ու երկու և ավելի խումբ ունեցող մանկապարտեզներում սահմանվում է դռնապանի հաստիք. դռնապանի հաստիքը սահմանվում է 1 միավոր, ինչպես նաև 2000 մ^2 -ից ավելի յուրաքանչյուր հաջորդ 2000 մ^2 օգտագործվող տարածքի համար՝ ևս 0,5 միավոր	1
15	այգեպան	մրգի այգի կամ դեկորատիվ տնկիներ ունեցող 0,5 հա մակերեսից ոչ պակաս դեկորատիվ բուսակա-նությամբ հողամաս ունեցող մանկապարտեզներում սահմանվում է այգեպանի հաստիք՝ 1 միավոր, ինչպես նաև 0,5 հա -ից ավելի յուրաքանչյուր հաջորդ 0,5 հա հողամասի համար՝ ևս 0,5 միավոր	1
16	պահակ	պահակի հաստիքը սահմանվում է օրենքով սահմանված կարգով	1
17	ավտովարորդ	ավտովարորդի հաստիքային 1 միավոր կարող է սահմանվել ավտոտրանսպորտի առկայության դեպքում	2

2) մանկավարժական կազմի համար.

NN ը/կ		Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից												Վարձա-տրության խումբը
	Պաշտոնի անվանումը	1 խումբ	2 խումբ	3 խումբ	4 խումբ	5 խումբ	6 խումբ	7 խումբ	8 խումբ	9 խումբ	10 խումբ	11 խումբ	12 խումբ	
1	տնօրեն	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	5
2	մեթոդիստ՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալ	0.25	0.25	0.5	0.5	0.75	0.75	1	1	1	1	1.25	1.25	4
3	դաստիարակ	1.17	2.34	3.51	4.68	5.85	7.02	8.19	9.36	10.53	11.70	12.87	14.04	4
4	դաստիարակ (մսուրային խմբեր (վաղ տարիքի առաջին, երկրորդ, կրտսեր տարիքի առաջին խմբեր)	1.4	2.8	4.2	5.6	7.0	8.4	9.8	11.2	12.6	14.0	15.4	16.8	4
5	երաժշտության դաստիարակ (երաժշտական ղեկավար)	2 տարեկան և ավագ հասակի երեխաների յուրաքանչյուր խմբին 0,25 դրույք, սակայն ոչ ավելի, քան 2 դրույքը												4
6	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	4 տարեկան և ավագ նախադպրոցական հասակի երեխաների յուրաքանչյուր խմբին՝ 0,25 դրույք, սակայն ոչ ավելի, քան 2 դրույքը												4

7	հատուկ մանկավարժ	կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մինչև 5 երեխայի առկայության դեպքում՝ 2 հաստիքային միավոր, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 5-ից մինչև 10 երեխայի առկայության դեպքում՝ 3 հաստիքային միավոր, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 10 և ավելի երեխայի առկայության դեպքում՝ 4 հաստիքային միավոր (հատուկ մանկավարժի, լոգոպեդի, սոցիալական մանկավարժի և հոգեբանի հաստիքների ընտրությունը կատարում է հաստատությունը՝ հաշվի առնելով հատկացված հաստիքների քանակը)	4
8	լոգոպեդ		4
9	սոցիալական մանկավարժ		4
10	հոգեբան		4
11	պարուսույց՝ պարի ղեկավար	4 տարեկան և ավագ նախադպրոցական հասակի երեխաների յուրաքանչյուր խմբին՝ 0,25 դրույք, սակայն ոչ ավելի, քան 2 դրույքը (հիմնադրի կողմից լրացուցիչ բյուջետային միջոցների կամ հաստատության արտաբյուջեի առկայության դեպքում)	4
12	լրացուցիչ կրթական ծառայությունների մանկավարժ (ուսուցիչ, խմբավար)	5 տարեկան և ավագ նախադպրոցական հասակի երեխաների յուրաքանչյուր խմբին՝ 0,25 դրույք, սակայն ոչ ավելի, քան 2 դրույքը (հիմնադրի կողմից լրացուցիչ բյուջետային միջոցների կամ հաստատության արտաբյուջեի առկայության դեպքում)	4

3) ուսումնաօժանդակ կազմի համար.

NN ը/կ		Հաստիքային միավորների քանակը՝ կախված խմբերի թվից												Վարձա-տրության խումբը
	Պաշտոնի անվանումը	1 խումբ	2 խումբ	3 խումբ	4 խումբ	5 խումբ	6 խումբ	7 խումբ	8 խումբ	9 խումբ	10 խումբ	11 խումբ	12 խումբ	
1	բուժքույր	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	3
2	դաստիարակի օգնական	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	2
3	դաստիարակի օգնական (մսուրային խմբեր (վաղ տարիքի առաջին, երկրորդ, կրտսեր տարիքի առաջին խմբեր)	1.3	2.6	3.9	5.2	6.5	7.8	9.1	10.4	11.7	13.0	14.3	15.6	2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ